Շիրակի մարզ կատարած աշխատանքային այցի շրջանակներում, մայիսի 15 –ին, ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանի գլխավորությամբ, Շիրակի մարզպետարանում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որին մասնակցում էին մարզպետ Ֆելիքս Ցոլակյանը, մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, համայնքների ղեկավարներ: Ընթացիկ տարում կատարված և շարունակվող աշխատանքների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան մարզպետարանի ՏԻՄ, Գյուղատնտեսության և բնապահպանության, Ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետերը և քաղաքաշինության բաժնի պետը:

ՏԻՄ - քաղաքային և 116 գյուղական համայնքներում ընտրված են համայնքների ղեկավարներ, կազմավորված են համայնքների ավագանիները:

Համայնքների ղեկավարների վերջին ընտրությունները կայացել են 2015 թվականի մարտի 15-ին: Անուշավանի, Հառիճի, Սարակապի համայնքներում համայնքների ղեկավարները վերընտրվել են, իսկ Արփենիի և Կարմրավանի համայնքներում ընտրվել են համայնքների նոր ղեկավարներ: Այժմ ընթացքի մեջ է 2015 թվականի հունիսի 7-ին կայանալիք մարզի թվով 2 համայնքներում՝ համայնքի ղեկավարի, 5 համայնքներում՝ ավագանու անդամների ընտրությունների նախապատրաստական աշխատանքները: Մրցակցություն է սպասվում Մուսայելյանի(1-2), Մարմաշենի(7-10), Փանիկի (9-14), Քարաբերդի (5-8) համայնքներում:

Ամենօրյա աշխատանք է տարվում համայնքների ղեկավարների աշխատակազմերի կադրային զորձի բարելավման և համայնքային ծառայության ներդրման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

- Շիրակի մարզի համայնքներում առկա է - 3816 հաստիք, որից
- Համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքներ – 2178
- Համայնքապետարանների այլ հաստիքներ
  (քաղաքական,հայեցողական պաշտոններ,
  տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ) - 1026
- Համայնքային ծառայության պաշտոններ - 612, որից Գյումրի քաղաքում՝ 202

  Զբաղեցված են - 536-ը, որից Գյումրի քաղաքում՝ 135

  Թափուր են - 76-ը, որից Գյումրի քաղաքում՝ 67

  Ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցված են - 68-ը, որից

Գյումրի քաղաքում՝ 56

2015թ. անցկացվել են մրցույթներ 17 համայնքների թվով 58 թափուր պաշտոնների համար: Արդյունքները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել 2015 թվականին վերապատրաստման ենթակա 64 համայնքային ծառայողների ցուցակը: Ընթացիկ տարում վերապատրաստման դասընթացների են մասնակցելու նաև համայնքների 25 ղեկավարներ և ավագանու 75 անդամներ:

2015 թվականին նախատեսված է մարզի թվով 39 համայնքներում իրականացնել վարչական հսկողություն: Առաջին եռամսյակում իրականացվել է 6 համայնքներում: Հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ: Կազմվել և գործողության մեջ են դրվել արձանագրված խախտումներ վերացնելու ժամանակացույցեր, համաձայն որոնց սահմանված ժամկետներում ամբողջությամբ վերացվել են խախտումները:

Այժմ մարզի 14 համայնքներում ընթացքի մեջ են 2-րդ եռամսյակի համար նախատեսված վարչական հսկողության իրականացման աշխատանքները:

Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին մշտապես մեթոդական աջակցություն և խորհրդատվություն է կազմակերպվում իրենց լիազորությունների իրականացման հարցերով: Պարբերաբար ուսումնասիրվել են մարզպետարան ստացված համայնքների ավագանիների որոշումների համապատասխանությունը օրենսդրությանը: Ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվում են համապատասխան առարկություններ, որոնք քննարկվում են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և իրավական ակտերը համապատասխանեցվում են օրենսդրությանը: Ձեռնարկված միջոցների արդյունքում, նախորդ տարիների համեմատությամբ, էականորեն բարելավվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի ընդունման գործընթացը:

Կազմակերպվել է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, մարզպետարանի աշխատակազմի ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեությունը:

Ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ ՀՀ Շիրակի մարզի տարածքում նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների կցագրման, տեղական զորակոչային հանձնաժողովների կազմերի հաստատման և զորակոչային աշխատանքների պատշաճ կազմակերպման ուղղությամբ: 2014 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի պլանային աշխատանքները կատարվել են համապատասխանաբար 101.5 և 102.1 %-ով:

Համագործակցված աշխատանքներ են տարվել մարզի թվով 15 սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ազգային անվտանգության, ոստիկանության և սահմանապահ ուժերի միջև:

Մարզպետարանի և մարզային փրկարարական վարչության միջև առկա է արդյունավետ համագործակցություն, որի արդյունքում ծագած խնդիրներին տրվում է օպերատիվ արձագանք: Մարզպետարանը հնարավոր օժանդակություն է ցուցաբերում մարզային փրկարարական վարչության գործունեությանը և ապահովվում է վարչության, տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության համագործակցությունը: Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պատրաստականության մակարդակի բարձրացման նպատակով մարզային փրկարարական վարչության մասնագետների կողմից պարբերաբար անցկացվում են հրամանատարական պատրաստության պարապմունքներ:

Շարունակվում է համագործակցությունը միջազգային կազմակերպու-թյունների հետ, մասնավորապես՝ բնական և տեխնածին աղետների նկատմամբ ազգաբնակչության խոցելիության նվազման նպատակով Հայկական Կարմիր խաչի ընկերության «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի շրջանակներում մարզպետարանի, մարզային փրկարարական վարչության և համայնքների ղեկավարների հետ սերտ համագործակցության արդյունքում մարզի թվով 18 համայնքներում ստեղծվել են 20 հոգուց բաղկացած համայնքային կամավորական արձագանքման թիմեր, որոնք ապահովված են անհրաժեշտ մասնագիտական գույքով ու հանդերձանքով: Այսօրվա դրությամբ միայն Շիրակի մարզում են ստեղծվել այսպիսի թիմեր, որոնց պահպանման, զարգացման և օգտագործման ոլորտում համագործակցության և փոխօգնության մասին մարզպետարանի, փրկարարական վարչության և համայնքների ղեկավարների հետ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: Մեր առաջարկությամբ ընկերությունը մարզի թվով 83 ուսումնական

հաստատություններում ստեղծել է հակահրդեհային անկյուններ և տրամադրել համապատասխան մասնագիտական գույք, իրականացրել է մարզի թվով 6 համայնքներում աղբահանության ծրագիր և համայնքներին տրամադրել աղբարկղեր: Այժմ ընթացքի մեջ են Մանթաշի ջրամբարի հնարավոր աղետի դեպքում վաղ ազդարարման համակարգի տեղադրման և թվով 6 համայնքների խմելու ջրի խողովակների փոխարինման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները:

ՀՀ Շիրակի մարզպետի հանձնարարականով մարզում սույն թվականի ապրիլի 20-ից մայիսի 20-ը հայտարարվել է սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչ տարածքների ընդլայնման միամսյակ: Տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային ենթակայության կազմակերպությունների ու այլ ընկերությունների կողմից արդեն իսկ կատարվել են համայնքների ճանապարհների, կրթության, մշակույթի, առողջապահական և այլ կազմակերպությունների ու բնակելի շենքերի տարածքներում աղբահանության, սանիտարական մաքրման, ծառատնկման, կանաչապատման և հնարավոր բարեկարգման աշխատանքներ: Ներկայումս շարունակվում են այդ աշխատանքների իրականացումը:

1. ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2015 թվականի 4 ամիսների բյուջեների սեփական եկամուտների կատարման ընթացքի մասին

2015թ. մայիսի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 86.8%-ով, նախատեսված 574,997.7 հազ. դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 472,172.9 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է - 75,824.9 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2015 թվականի 4 ամիսների բյուջեների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի. /հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2015թ. 4 ամիսների ծրագիր	Փաստացի կատարողական առ 01.05.2015թ.	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	*105,631.8*	*69,884.9*	*-35,746.9*	*66.2*
Գույքահարկ	*212,521.5*	*212,341.8*	*-179.7*	*99.9*

Պետական տուրք	16,128.3	16,241.5	113.2	100.7
Տեղական տուրք	44,873.0	46,767.2	1,894.2	104.2
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	*100,099.4*	*66,816.1*	*-33,283.3*	*66.7*
ա/ հողի վարձավճար	87,404.1	53,842.8	-33,561.3	61.6
բ/ գույքի վարձավճար	12,695.3	12,973.3	278.0	102.2
Այլ եկամուտներ	95,743.7	87,121.4	-8,622.3	91.0
Ընդամենը սեփական եկամուտներ	**574,997.7**	**499,172.9**	**-75,824.9**	**86.8**

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ սեփական եկամուտների փաստացի հավաքագրման մակարդակը նվազել է 8.2% կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ պակաս է հավաքագրվել 44,463.9 հազ. դրամ:

Մարզի թվով 22 համայնքներում նախատեսվածի հանդեպ 100% և ավելի բարձր ցուցանիշ են ապահովվել սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ:

Մարզի քաղաքային համայնքները 2015 թվականի 4 ամիսներին սեփական եկամուտների կատարման բարձր ցուցանիշ են ապահովել: **Գյումրիում** սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը կազմել է 94.7%, **Արթիկում՝** 116.4% և **Մարալիկում՝** 93.2%:

Մարզի համայնքների սեփական եկամուտներում նախատեսված հարկատեսակները, բացի հողի հարկից և հողի վարձակալական վճարներից պլանները կատարել են 90-100%-ի չափով: Ցածր ցուցանիշ գրանցված հողի հարկի գծով նախատեսված 105 մլն 632 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 69 մլն 885 հազ. դրամ, կամ 66.2%: Հողի հարկի փաստացի հավաքագրումը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 16.4 %-ով, կամ 13 մլն 671 հազ. դրամ, իսկ հողի վարաձակալական վճարների գծով նախատեսված 87 մլն 404 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 53 մլն 843 հազ. դրամ, կամ 61.6%: Փաստացի հավաքագրումը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 9.6 %-ով, կամ 5 մլն 688 հազ. դրամ:

Առաջարկվել է մարզի համայնքների ղեկավարներին առանձնակի ուշադրություն դարձնեն հողի հարկի և հողի վարձակալական վճարների գծով եկամուտների ապահովման նոր մոտեցումների ձևավորմանը, որոնք ենթադրում են համայնքների կողմից օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների առավել խիստ կիրառում:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել և ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ 2015 թվականի առաջին կիսամյակում սեփական եկամուտների կատարումն առավելագույնին հասցնելու գործում:

2015 թվականի 4 ամիսների ծրագրով մարզի համայնքներին նախատեսված ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան կազմել է 1 մլրդ 389 մլն 468 հազ. դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից մարզի թվով 67 համայնքներին նախատեսվել է 66 մլն 420 հազ. դրամի փոխհատուցում, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

2. Մարզի համայնքների 2015 թվականի 4 ամիսների բյուջեներից աշխատավարձերի վճարման ընթացքի վերաբերյալ

2015 թվականի մայիսի 1-ի դրությամբ մարզի թվով 3 համայնքներում առաջացել են ընդամենը 1 մլն 207 հազ. դրամի աշխատավարձերի ընթացիկ պարտքեր, որից Ամասիա համայնքում՝ 803.0 հազ. դրամ (ՀՈԱԿ-ների աշխատողների աշխատավարձեր), Կարմրավանի համայնքում՝ 356.2 հազ. դրամ (համայնքապետարանի աշխատողների աշխատավարձ և եկամտային հարկ) և Սալուտ համայնքում՝ 48.4 հազ. դրամ (համայնքապետարանի աշխատողների աշխատավարձ):

Մարզի համայնքները նախորդ տարիներից աշխատավարձերի գծով պարտքեր չեն կուտակել:

2015թ. մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի կանխատեսվող ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ կունենան հետևյալ տեսքը.

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքեր՝ 2014-2015թթ.

h/h	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/	
		2014թ.	2015թ. /կանխատեսվող/
	Հացահատիկ	43913	46184
	Այդ թվում՝ աշնանացան ցորեն	24385	26792
	գարնանացան գարի	19528	19392
	Կարտոֆիլ	4268	4368
	Բանջարեղեն	1698	1718
	Կերային մշակաբույսեր	13733	13873
	Տեխնիկական մշակաբույսեր	34	36
Ընդամենը		**63646**	**66179**

2015թ. *բերքի տակ ցանվել է* ***26545հա*** *աշնանացան ցորեն՝ աճ* ***2160հա:***

Աշնանացան ցորենի ցանքատարածությունների վիճակը նորմալ է, ձմռանը և վաղ գարնանը տոպման, փթման և ցրտահարության դեպքեր չեն գրանցվել: Ցանքատարածությունները գտնվում են նորմալ թփակալված վիճակում, սպասվում է բարձր բերք:

Աշնանացան ցորենի սերմարտադրության ծրագիր

«Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիր».

2013-2014թ. Էլիտային վերարտադրություն.

2014թ.

սերմացու 120.05 տ

շահառու 35

հողատարածք 400.17հա

2013թ.

սերմացու 120.15տ

շահառու 38

հողատարածք 400.5հա

2013-2014 թթ.. առաջին վերարտադրություն.

2014 թ. *2013* թ. .

սերմացու 1900 տոննա սերմացու 1335 տոննա

համայնք 68 վճարման ենթակա 701.78 տոննա

համայնք 71

գումար 112.2 մլն դրամ

հավաքագրվել է 104.3 մլն դրամ

մնում է հավաքագրելու 7.9 մլն դրամ

Գարնանացանի համար իրականացվող ծրագրեր

Անվճար սերմացուի տրամադրում*(կարկտահարված համայնքներին, 2014թ. աշուն).*

Գարնանացան գարու սերմ 569.822 տ, 2849հա,

Առվույտի սերմ 49.807 տ, 1992 հա,

Եգիպտացորենի սերմ 12.255 տ, 490 հա,

2015 թվականին մարզին մատչելի գներով հատկացվել է՝

Գարնանացան գարու սերմ 190 տ (հայտ 100 տ),

Կորնգանի սերմ 64.9 տ (հայտ 50տ),

Առվույտի սերմ 1 տ (հայտ 1տ)

Նշված քանակությամբ սերմացուները ամբողջությամբ ներկրվել են մարզ և հատկացվել են գյուղացիական տնտեսություններին:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրեր.

2015 թվականին հայտ է ներկայացվել **5000տ** ազոտական պարարտանյութի համար, համայնքներին է բաշխվել շուրջ **3929տ:**

2015 թվականին հայտ է ներկայացվել **3500000 լիտր** դիզելային վառելանյութի համար, բաշխվել է **210000 լիտր:**

2015 թվականին հայտ է ներկայացվել **150տ** ֆոսֆորական, **150տ** կալիումական պարարտանյութերի համար,համայնքներին բաշխվել է ֆոսֆորական **7950կգ**, կալիումական **16350կգ:**

2014թ. «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում մարզի 7 համայնքներում ձեռք է բերվել 12 միավոր գյուղատնտեսական տեխնիկա՝

Արևշատ– 2 հատ անիվավոր տրակտոր եւ գյուղ. գործիքներ,

Սարալանջ- 2 հատ անիվավոր տրակտոր,

Նահապետավան– 2 հատ անիվավոր տրակտոր,

Ծաղկուտ – 2 հատ անիվավոր տրակտոր,

Հոռոմ– 1 հատ անիվավոր տրակտոր,

Գուսաննագյուղ - Т-150 2հատ:

ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում 2013-2014թթ. մարզ է ներկրվել 13 միավոր <<ՄՏԶ>> մակնիշի տրակտորներ և գյուղ. գործիքներ: 2015թ. գյուղ. տեխնիկա ձեռք բերելու նպատակով ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից առաջարկվել է հետևյալ գները՝ <<Նիվա-էֆֆեկտ>> հացահատիկահավաք կոմբայններ՝ 49.044 ԱՄՆ դոլար, <<ՄՏԶ 82.1>> մակնիշի տրակտորներ՝ 17.000 ԱՄՆ դոլար:

Ոռոգում

Ընդամենը ոռոգվող հողեր – 20104 հա

որից՝ վարելահող – 15084 հա

տնամերձ – 5020 հա

Ջրօգտագործողների հետ 2015 թվականի ոռոգումը կազմակերպելու նպատակով կնքվել է 11980 պայմանագիր 9560 հա ոռոգելու համար:

Պլանավորվել են հետևյալ աշխատանքները՝

Միջտնտեսային նշանակության ջրանցքների մաքրում - 11.8 մլն դրամ

Միջտնտեսային նշանակության ջրանցքների նորոգման աշխատանքներ – 9.6 մլն դրամ

ՀՏԿ-ների և ջրաչափական կետերի նորագման աշխատանքներ – 8.6 մլն դրամ

Ներտնտեսային ցանցերի մաքրման աշխատանքներ – 19.3 մլն դրամ

Ներտնտեսային ցանցերի նորոգման աշխատանքներ – 1.6 մլն դրամ

Պոմպակայանների նորոգման աշխատանքներ – 2.8 մլն դրամ

Մայիսի 1-ի դրությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները՝

Միջտնտեսային ցանցերի մաքրում – 3.5 մլն դրամ

Պոմպակայանների նորոգում – 4.6 մլն դրամ (ծախսվել է պլանավորվածից 1.8 մլն դրամ ավելի)

Մեքենամեխանիզմների նորոգում – 4.0 մլն դրամ

Ջրամբարների լցվածություն՝

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը մլն մ³	Լցվածությունը առ 14.05.2014թ.	Լցվածությունը առ 14.05.2015թ.	Աճ/նվազում +/-
1	Ախուրյան	540	265.85	420.52	+154.67
2	Արփի լիճ	105	36.70	45.60	+8.90
3	Կառնուտ	22.6	11.92	13.95	+2.03
4	Սառնաղբյուր	4.8	2.06	0.35	-1.71
5	Վարդաքար	5	4.16	1.56	-2.6
6	Թավշուտ	6	2.39	3.56	+1.17
7	Մանթաշ	8.2	3.50	2.25	-1.25
8	Ջաջուռ	0.28	0.22	0.23	+0.01
Ընդամենը		**151.88**	**60.95**	**67.50**	**+6.55**

Լցվածությունը 14.05.2014-14.05.2015թթ. հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

Սառնաղբյուրի, Վարդաքարի և Մանթաշի ջրամբարների լցվածությունը նախորդ տարվա համեմատ զգալի պակաս է, որը հնարավոր է խնդիրներ առաջացնի ոռոգման սեզոնի ընթացքում:

Ծրագիր

2015 թվականի ոռոգման համակարգերի հիմնանորոգում (պետ. բյուջե)

Օբյեկտի անվանումը	Կատարվելիք աշխատանքների համառոտ բնութագիրը	հազ. դրամ
Կառնուտի ջրամբարի վերանորոգում	Կառնուտի ջրամբարի ոռոգման ջրի ներքին բացթողման փականի և հիդրոտեխնիկական սարքավորումների վերանորոգում	7.200
Շիրակի ջրանցքի 26-րդ բաժանարարի վերանորոգում	Բ26 միջտնտեսային բաժանարարի ՊԿ 183+87 ՊԿ 193+38 քայքայված բետոնային հատվածների վերանորոգում	16.700

Արփի լիճ ջրամբարի ջրթող փականների փոխարինում նոր կոնստրուկցիայի փականներով և մոտեցնող ջրանցքի մաքրում	Մետաղական փականների վերանորոգում	15.000

2014 - 2015թթ. ՀՀ Շիրակի մարզում գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի հաշվառման վերաբերյալ

Ընդամենը՝ մարզ	**Խ.ե.կ. /գլուխ/**	**Որից՝ կովեր /գլուխ/**	**Խոզեր /գլուխ/**	**Ոչխարներ և այծեր /գլուխ/**
2014թ.	107097	50567	13810	90400
2015թ.	107847	50603	12870	90527
Աճ/նվազում (+/-)	**+750**	**+36**	**-940**	**+127**

Մարզի **23** համայնքներում տեղադրված **56** հակակարկտային կայանքները ենթարկվել են փորձաքննության և պատրաստ են շահագործման:

Քաղաքաշինություն - պետական բյուջեի և այլ ֆինանսական աղբյուրներուների հաշվին ՀՀ Շիրակի մարզում իրականացվել են մեծ ծավալի շինարարական աշխատանքներ: Կառուցվել և շահագործման են հանձնվել կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային, կոմունալ և այլ օբյեկտներ: Ներդրումների ծավալը կազմել է մոտավորապես 100.0 մլրդ. դրամ գումար:

ՀՀ Շիրակի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների իրականացման նպատակով մարզին 2011թ.-2014թ. ՀՀ կառավարության կողմից հատկացվել է 6387.7 մլն. դրամ գումար:

Ծրագրում ընդգրկվել են 65 համայնքներ:

Շինարարությունը իրականացրել են 40 շինարարական կազմակերպություններ, ապահովելով մոտ 1100 աշխատատեղ:

10 համայնքներում վերանորոգվել են 152 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ-995.0 մլն. դրամ գումարով:

10 համայնքներում հիմնանորոգվել են 55 փողոցներ-2689.0 մլն դրամ գումար:

Հիմնանորոգվել և կառուցվել են կրթական 56, մշակույթային 7, առողջապահական 4 և 9 այլ օբյեկտներ (գազ, ջրագիծ, համայնքային կենտրոն, կոյուղի)-2545.7 մլն. դրամ գումարով:

Թվով 34 համայնքներին տրվել է 158.0 մլն. դրամ կապիտալ սուբվենցիաներ, որից 4 համայնքներին հակակարկտային կայանների ձեռք բերման նպատակով (Աղին, Բագրավան, Շիրակավան, Վահրամաբերդ):

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել 6-րդ հրատապ ծրագրի նախագիծ-1320.0 մլն. դրամ, որի շրջանակներում հնարավորություն կունենանք իրականացնելու թվով 66 համայնքներում կրթական-17, մշակութային-4, առողջապահական-3, բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների-7, փողոցների-11 և 24 այլ օբյեկտների վերանորոգման աշխատանքներ: Նախատեսնված է 5 հակակարկտային կայանների տեղադրման աշխատանքներ, իսկ 13 համայնքների կհատկացվեն կապիտալ սուբվենցիաներ: Առայժմ ՀՀ կառավարության կողմից գումարների հատկացման որոշում չի կայացվել:

Վերջին տարիներին (2009-2012թթ.) կառուցվել և շահագործման են հանձնվել Գյումրի քաղաքի Մուշ և Անի թաղամասերում 60 բազմաբնակարան բնակելի շենք 2812 բնակարաններով: Նշված 2812 բնակարաններից մինչ օրս 1756 բնակարանների սեփականաշնորհման գործընթացը չի սկսվել, քանի որ 38 բնակելի շենքները պետական գրանցում դեռևս չեն ստացել:

Շիրակի մարզում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից բնակարան ստանալու շահառու են ճանաչվել թվով 751 անօթևան ընտանիքներ, որից 444 շահառու Գյումրի քաղաքում, 137 Ախուրյան և թվով 170 շահառու 20 գյուղական համայնքներում:

Գյումրի քաղաքում 2014-2015թթ. բնակարանների գնման վկայագրերի տրամադրման համար հատկացվել է 1500.0 մլն. դրամ գումար, (1-ին փուլ) ծանուցվել են 264 ընտանիքներ: Պայմանագիր են կնքել և ստացել վկայագրեր 223 ընտանիքներ, որից բնակարաններ են ձեռք բերել 157 ընտանիքներ: Ապամոնտաժվել են 71 ժամանակավոր կացարաններ: Բնակարանների գնման գործընթացը շարունակվում է: 1-ին փուլի վերջնաժամկետ է սահմանված 2015թ. օգոստոսի 1-ը:

Գյումրի քաղաքում բնակարանների գնման վկայագրերի 2-րդ փուլի շարունակության համար անհրաժեշտ է ևս 1500.0 մլն. դրամ գումար 221 ընտանիքների բնակարանային գնման վկայագրերի տրամադրման համար:

ՀՀ Շիրակի մարզում հրատապ խնդիր է նաև Ախուրյան համայնքի թվով 3 կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքերը ավարտին հասցնելու, ինչպես նաև թվով 20 գյուղական համայնքների 170 անհատական բնակելի տների կառուցման հարցը:

Լուրջ հիմնախնդիրներ կան վթարային շենքերի ամրացման (88-ը Գյումրի քաղաքում) ինչպես նաև որոշ դպրոցներում, մշակույթի տներում, մանկապարտեզներում, գյուղապետարաններում առկա են վերանորոգման, հիմնանորոգման աշխատանքներ:

Հանդիպման ընթացքում ՀՀ ՏԿԱՒ նախարար Արմեն Երիցյանն անդրադարձավ հանրապետության 3 մարզերում իրականացվող համայնքների խոշորացման պիլոտային ծրագրին: Համայնքային շատ խնդիրներ կլուծվեն համայնքների խոշորացման ծրագրի շնորհիվ: Թյուր կարծիք կա, որ որոշ համայնքներում կարող են փակվել դպրոցներ, մանկապարտեզներ կամ այլ մշակութային օջախներ: Ես ձեզ վստահեցնում եմ, որ ոչ մի կառույց չի լուծարվի: Ճիշտ հակառակը՝ համայնքների խոշորացման դեպքում միջազգային կազմակերպություններից կարող ենք մեծ ներդրումներ ներգրավել« որոնք կուղղվեն համայնքային ճանապարհների, խմելու և ոռոգման ջրի համակարգերի և աշխատատեղերի հետ կապված խնդիրները լուծելու համար,- ընդգծեց նախարար Ա. Երիցյանը՝ ավելացնելով, որ հանձնարարել է մարզպետներին ներկայացնել մարզերի համար ամենահրատապ երեք խնդիրներն ու հարցերը: Այսօր ոչ մեկը չի գա մեր տները վերանորոգելու, մեր փողոցներն ասֆալտապատելու, խմելու, ոռոգման ջուր քաշելու, մենք են դա անելու: Ես անդունդ եմ տեսնում տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ու համայնքների միջև: Համայնքներն իրենք պետք է իրենց խնդիրները ներկայացնեն, նախարարություն էլ՝ ձեռք մեկնի: Թյուր կարծիք կա համայնքների խոշորացման ծրագրի մասին՝ծրագիր, որն առայժմ պիլոտային է, բայց իր հայրենիքին նվիրված համայնքի ղեկավարն ինքը պետք է նախ և առաջ ներկայացնի առաջարկ՝ իր համայնքի խնդրի լուծման համար: Միգրացիայի հիմնական խնդիրը աշխատատեղներն են: Մարդիկ թողնում գնում են, քանի որ

աշխատատեղ չունեն : Մենք պետք է այնպես անենք, որ ստեղծվեն աշխատատեղեր, բայց բոլորս միասին պետք է աշխատենք այդ ուղղությամբ: Եթե գյուղապետն իր գումարները չի կարող հավաքել, ուրեմն ծուլանում է: Ի վերջո, մենք պետք է մեր համայնքները զարգացնենք,պետք է իրար վստահենք և աշխատենք միասին: Վստահ եղեք՝ եթե ձեր սիրտը ցավում է ձեր համայնքի համար, ապա իմ սիրտն էլ է ցավում, ես ձեր կողքին եմ ցանկացած հարցի շուրջ: Շիրակի համար մենք անելիքներ շատ ունենք: Անձամբ ես լինելու եմ ձեր կողքին և հնարավորության դեպքում ավելի հաճախ եմ գալու մարզ»,- ավելացրեց նախարարը: Հանդիպման ավարտին նախարարը պատասխանեց համայնքների ղեկավարների բոլոր հարցերին:

Արմենուհի Մխոյան